«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԱՊՁԲ-2022/9-ԵՊԲՀ-2

ք. Երևան __ _____2022թ.

«**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան**» **հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր՝ **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «**Ինտերմեդ Գրուպ**» **ՍՊԸ**-ի դեմս տնօրեն **Ա. Դիլանյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի **N 1** հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի **6.3** կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝ ա)

պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի **6.2** կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի **6.2** կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի **6.2** կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 **Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի **6.5** կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 **Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 **Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 914 000 (երեք միլիոն ինը հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում, գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի **5.1** կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների **armeps** համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի **5.2** կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների **armeps** համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի **5.2** կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի **5.2** կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի **0,05** (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի **1.1** կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի **0,5** (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի **6.2** և **6.3** կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի **3.3** կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05** (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է **3** (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.1.1 Մասնակցի կողմից հայտով միևնույն ապրանքի համար մեկից ավել ապրանքային նշան, կամ արտադրող (արտադրող կազմակերպություն) ներկայացնելու դեպքում, պայմանագրի կատարման փուլում, պայմանագրով սահմանված ողջ խմբաքանակի համար ապրանքի միանվագ և (կամ) փուլային մատակարարումը իրականացվելու է պայմանագրվ սահմանված ապրանքային նշաններից, կամ արտադրողներից (արտադրող կազմակերպություններից) միայն մեկով՝ ըստ մատակարարի ընտրության:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 27/55
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 1930048363450100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 02621803
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	Հեռ. 010 399994, 099 190098
	էլ. փոստ intermedgroup@inbox.ru
	Տնօրեն Ա. Դիլանյան
_____	Digitally signed by DILANYAN ARMAN 3404850092
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ
	Date: 2022.12.21 14:07:03 AMT

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.12.22 12:40:42 AMT

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ՀՄԱԱՊՁԲ-2022/9-ԵՊԲՀ-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
8	33161120/227	Ուլտրաձայնային ծայրադիր, ատրճանակատիպ	ETHICON ENDO SURGERY, Johnson & Johnson	Հարմոնիկ Գեն11 գեներատորի համար նախատեսված և պարտադիր համատեղելի ատրճանակատիպ ծայրադիր (օրիգինալ): Մկրատ կոագուլացիոն էրգոնոմիկ ատրճանակային բռնակով բաց և էնդոսկոպիկ միջամտությունների համար ձեռքի ակտիվացման հնարավորությամբ: Նախատեսված է մինչև 5 մմ տրամագծով հյուսվածքների և անոթների հատման և կոագուլյացիայի համար: Ակտիվացիայի բացակայության պայմաններում կարող է օգտագործվել որպես գրասպեր և զաժիմ: Տիտանային սայրի տատանումների հաճախությունը երկայնական ուղղությամբ 55,5 կՀց: Ծայրադիրը հնարավոր է ակտիվացնել հզորության կարգավորման մինիմալ և մաքսիմալ կոճակների միջոցով, որոնք տեղակայված են բռնակի հիմքի առաջային մակերեսի վրա, որի միջոցով հնարավոր է լինում ապահովել մաքսիմալ հասանելիություն ինչպես նաև ոտքի սեղմակի միջոցով: Կոճակների ընդհանուր քանակը 2 հատ է: Բռնակը ունի ներկառուցված համակարգ, որը զգայական և ձայնային ցույց է տալիս բրանշերի ամբողջական փակումը: Առկա է հետադարձ կապի համակարգ գեներատորի հետ և ծայրադիրիր ակտիվ սայրի ջերմաստիճանի վերահսկողության համար Գեն 11-ի միջոցով: Դա հնարավորություն է տալիս բարձրացնել ծայրադիրի աշխատանքի արդյունավետությունը և արագությունը, ինչպես նաև նվազեցնում է հյուսվածքների կողմնային ջերմային վնասումը: Առկա է լրացուցիչ ձայնային ազդանշան, որը զգուշացնում է ակտիվ սայրի ջերմաստիճանի բարձրացման մասին, որը հնարավորություն է տալիս ապահովել ավելի վստահելի հեմոստազ: Ցողունը հակափայլային ծածկույթով: Ցողունի երկարությունը 23 սմ ակտիվ բրանշի ծայրից մինչև ռոտացիոն օղակը: Գործիքի երկարությունը 34 սմ: Ցողունի տրամագիծը 5 մմ: Ցողունի պտույտը 360 աստիճանով ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման տեղում հնարավորություն է տալիս աշխատել մեկ ձեռքով հեշտացնում է տեսանելիությունը և հասանելիությունը վիրահատական դաշտին: Առկա է երկարության 5 մմ ինդիկատոր պասիվ բրանշի երկու կողային մակերեսների վրա: Առկա է ակոսավոր մուտք ձեռքի բռնակի հետ միանալու համար: Բրանշերի առբերման ատրճանակային բռնակ: Բրանշերի առբերման ներքին մակերեսի վրա առկա են ռետինե ներդիրներ, ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոճակների և ռոտացիոն օղակի վրա, որի շնորհիվ կանխվում է սահումը և դառնում է հարմարավետ բժշկի աշխատանքը: Աշխատանքային մասը կազմված է ակտիվ՝ սայր և պասիվ բրանշերից: Ակտիվ բրանշը տիտանային է ունի հատուկ ծածկույթ, որը կանխում է հյուսվածքների կպումը թեք է, որը ապահովում է օպտիմալ վիզուալիզացիան և կտրվածքի վրա ունի վեցանկյուն տեսք: Թեք արտափքված և ակտիվ բրանշի պրոքսիմալ մասերը նախատեսված են հիմնականում հյուսվածքների կոագուլյացիայի համար: Սուր վերին և ստորին եզրերերը, ինչպես նաև ակտիվ բրանշի դիստալ մասը նախատեսված են հատելու համար: Պասիվ բրանշը ունի ակոսավոր պլաստիկ վրադիր հյուսվածքների հետ էֆֆեկտիվ աշխատելու համար: Ակտիվ բրանշի երկարությունը 15 մմ: Պասիվ բրանշի լայնությունը 2,67 մմ: Բրանշի բացվածքը կազմում է 11,35 մմ: Մատակարարվում է աշխատանքային մասի կողպեքով: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար ենթակա չէ կրկնակի ախտահանման համար: Մատակարարվում են ստերիլ, կարող են կիրառվել կարդիոստիմուլյատորներով հիվանդների մոտ: Համատեղելի են Գեն 11 գեներատորների հետ հատուկ հարմոնիկ ադապտորի միջոցով: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 15 ամսվա առկայություն: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Փաթեթավորումը՝ 1 հատ ծայրադիր: Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ	հատ	395,000	395,000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2022 թվականին՝ պայմանագիր կնքելու օրվանից հաշված մինչև դեկտեմբերի 25-ը:

9	33161120/228	Ուլտրաձայնային էլեկտրադանակի ծայրադիր, աքսիալ	ETHICON ENDO SURGERY, Johnson & Johnson	Հարմոնիկ Գեն11 գեներատորի համար նախատեսված և պարտադիր համատեղելի աքսիալ ծայրադիր (օրիգինալ): Մկրատ կոագուլացիոն էրգոնոմիկ ատրճանակային բռնակով բաց և էնդոսկոպիկ միջամտությունների համար ձեռքի ակտիվացման հնարավորությամբ: Նախատեսված է մինչև 5 մմ տրամագծով հյուսվածքների և անոթների հատման և կոագուլյացիայի համար: Ակտիվացիայի բացակայության պայմաններում կարող է օգտագործվել որպես գրասպեր և զաժիմ: Տիտանային սայրի տատանումների հաճախությունը երկայնական ուղղությամբ 55,5 կՀց: Ծայրադիրը հնարավոր է ակտիվացնել հզորության կարգավորման մինիմալ և մաքսիմալ կոճակների միջոցով, որոնք տեղակայված են բռնակի հիմքի առաջային մակերեսի վրա, որի միջոցով հնարավոր է լինում ապահովել մաքսիմալ հասանելություն, ինչպես նաև՝ ոտքի սեղմակի միջոցով: Բռնակը ունի ներկառուցված համակարգ, որը զգայական և ձայնային ցույց է տալիս բրանշերի ամբողջական փակումը: Առկա է հետադարձ կապի համակարգ գեներատորի հետ և ծայրադիրիր ակտիվ սայրի ջերմաստիճանի վերահսկողության համար Գեն11-ի միջոցով: Դա հնարավորություն է տալիս բարձրացնել ծայրադիրի աշխատանքի արդյունավետությունը և արագությունը, ինչպես նաև նվազեցնում է հյուսվածքների կողմնային ջերմային վնասումը: Առկա է լրացուցիչ ձայնային ազդանշան, որը զգուշացնում է ակտիվ սայրի ջերմաստիճանի բարձրացման մասին, որը հնարավորություն է տալիս ապահովել ավելի վստահելի հեմոստազ: Ցողունը հակափայլային ծածկույթով: Ցողունի երկարությունը 36 սմ ակտիվ բրանշի ծայրից մինչև ռոտացիոն օղակը: Ցողունի տրամագիծը 5 մմ: Ցողունի պտույտը 360 աստիճանով ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման տեղում հնարավորություն է տալիս աշխատել մեկ ձեռքով հեշտացնում է տեսանելիությունը և հասանելիությունը վիրահատական դաշտին: Առկա է երկարության 5մմ ինդիկատոր պասիվ բրանշի երկու կողային մակերեսների վրա: Առկա է ակոսավոր մուտք ձեռքի բռնակի հետ միանալու համար: Բրանշերի առբերման ատրճանակային բռնակ: Բրանշերի առբերման ներքին մակերեսի վրա առկա են ռետինե ներդիրներ, ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոճակների և ռոտացիոն օղակի վրա, որի շնորհիվ կանխվում է սահումը և դառնում է հարմարավետ բժշկի աշխատանքը: Աշխատանքային մասը կազմված է ակտիվ՝ սայր և պասիվ բրանշերից: Ակտիվ բրանշը տիտանային է ունի հատուկ ծածկույթ, որը կանխում է հյուսվածքների կպումը թեք է, որը ապահովում է օպտիմալ վիզուալիզացիան և կտրվածքի վրա ունի վեցանկյուն տեսք: Թեք արտափքված և ակտիվ բրանշի պրոքսիմալ մասերը նախատեսված են հիմնականում հյուսվածքների կոագուլյացիայի համար: Սուր վերին և ստորին եզրերերը, ինչպես նաև ակտիվ բրանշի դիստալ մասը նախատեսված են հատելու համար: Պասիվ բրանշը ունի ակոսավոր պլաստիկ վրադիր հյուսվածքների հետ էֆֆեկտիվ աշխատելու համար: Մատակարարվում է աշխատանքային մասի կողպեքով: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար ենթակա չէ կրկնակի ախտահանման համար: Մատակարարվում են ստերիլ կարող են կիրառվել կարդիոստիմուլյատորներով հիվանդների մոտ: Համատեղելի են Գեն 11 գեներատորների հետ հատուկ հարմոնիկ ադապտորի միջոցով: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 15 ամսվա առկայություն: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Փաթեթավորումը՝ 1 հատ ծայրադիր: Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	382,000	382,000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2022 թվականին՝ պայմանագիր կնքելու օրվանից հաշված մինչև դեկտեմբերի 25-ը:
10	33161120/229	Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակարգով	ETHICON ENDO SURGERY, Johnson & Johnson	Հարմոնիկ Գեն11 գեներատորի համար նախատեսված և պարտադիր համատեղելի ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակարգով կոագուլյացիոն մկրատ (օրիգինալ): Կոագուլյացիոն մկրատ բաց միջամտությունների հյուսվածքներին ադապտացիայի համար նախատեսված համակարգով, ձեռքի ակտիվացիայի հնարավորությամբ: Մկրատը պլաստիկ կորպուսով երկու մկրատաձև բռնակներով՝ ակտիվ և ֆիքսված, նախատեսված են միաժամանակ հատելու և կոագուլյացիայի համար, որոնք ունեն մինչև 5մմ տրամագծով անոթներ: Ակտիվացիայի բացակայության դեպքում նրանք կարող են օգտագործվել որպես գրասպեր կամ սեղմակ: Մկրատի տիտանային սայրի տատանման հաճախականությունը երկայնակի ուղղությամբ 55,5 կՀց: Ծայրադիրը հնարավոր է ակտիվացնել մինիմալ կամ մաքսիմալ հզորության ռեժիմների կոճակների միջոցով, որոնք տեղակայված են ծայրադիրի ստորին մակերեսի վրա հեշտ հասանելիության համար կամ ոտքի առբերման միջոցով: Կոճակների ընդհանուր քանակը 2 հատ է: Լրացուցիչ ձայնային ազդանշանը հուշում է ակտիվ բրանշի ջերմաստիճանի բարձրացման մասին, որը լրացուցիչ հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ կառավարել հեմոստազը: Ցողունի ընդանուր երկարությունը 17 սմ հաշված սայրից մինչև ձեռքի	հատ	379,000	379,000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2022 թվականին՝ պայմանագիր կնքելու օրվանից հաշված մինչև դեկտեմբերի 25-ը:

				կառավարման MAX կոճակը: Աշխատանքային մասը բաղկացած է ակտիվ/սայր/ և պասիվ բրանշերից: Ակտիվ բրանշը տիտանային է, կոնաձև, թեք, որը հնարավորություն է տալիս լավացնել աշխատանքային դաշտի տեսանելիությունը: Ակտիվ բրանշի /սայր/ երկարությունը 16 մմ: Բրանշի բացվածքը կազմում է 23,4 մմ:Պասիվ բրանշը ունի պլաստիկ վրադիր ակոսիկներ, որը ապահովում է հյուսվածքների հետ արդյունավետ աշխատանքը: Գործիքի ցողունը ալյումինից է և նվազեցնում է ծայրադիրի տաքացումը: Բրանշերի առբերման բռնակները սիմետրիկ են օղակաձև: Բրանշերի առբերման բռնակների ներքին մակերեսի և ակտիվացիայի կոճակների վրա առկա ռետինային ծածկույթը կանխում են վիրաբույժի ձեռքի սահելը և նպաստում են ձեռքի հարմար տեղակայմանը: Բռնակների օղակների ամբողջական սեղմման դեպքում առկա տարածությունը ապահովում է կառավարելի կոմպրեսիա չազդելով դիսսեկցիայի վրա: Առկա է ակոսավոր մուտք թեթևացված լապարոսկոպիկ բռնակին միանալու համար: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է ստերիլ, կոմպլեկտավորվում է աշխատանքային մասի կողպեքով և աջակցող ռետինային վրադիրով ծայրադիրը մոնտաժելու համար: Կարող են կիրառվել կարդիոստիմուլյատորներով հիվանդների մոտ: Համատեղելի է GEN11 գեներատորների հետ հատուկ հարմոնիկ փոխարկիչի միջոցով:Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 15 ամսվա առկայություն: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Փաթեթավորումը՝ 1 հատ մկրատ: Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:							
11	33161120/230	Բռնակ ձեռքի ակտիվացման համար	ETHICON ENDO SURGERY, Johnson & Johnson	Հարմոնիկ Գեն11 գեներատորի համար նախատեսված պարտադիր համատեղելի ձեռքի ակտիվացման համար բռնակ (օրիգինալ): «HARMONIC» և «GEN11» գեներատորի համար նախատեսված լապարոսկոպիկ բռնակ HP054 , որը ուլտրաձայնային գեներատորի էլեկտրական իմպուլսները վերափոխում է ծայրադիրի ակտիվ սայրի մեխանիկական երկայնական տատանումների 50-100 մկմ դիապազոնում 55,5 կՀց հաճախականությամբ: Բաղկացած է մետաղական բռնակից և միացնող լարից, որը վերջանում է կտրվածքով կցորդիչով, որը իր վրա ունի ճիշտ միացման համար նախատեսված մակնշում: Նախատեսված է 95 ակտիվացիայի համար, առկա է ներկառուցված հաշվիչ: Բռնակին միացված ծայրադիրները /թե 5 և թե 10մմ տրամագծով/ հնարավոր է ձեռքով ակտիվացնել մաքսիմալ և մինիմալ /հնարավոր է կարգավորել/ հզորության ռեժիմներով, ինչպես նաև ոտքի սեղմակների միջոցով: Նախատեսված է բազմանվագ օգտագործման համար, հնարավոր է ախտահանում ավտոկլավացման միջոցով մինչև 120oC ջերմաստիճանի պայմաններում: Մատակարարվում է ոչ ստերիլ վիճակում ունի հերմետիզացիայի համար կափարիչ որը օգտագործվում է նախաստերիլիզացիոն մշակման ժամանակ միացման մեխանիզմը պաշտպանելու համար: Տրամադրվում է առնվազն 9 ամսվա երաշխիքային կտրոն: Գործարանային փաթեթավորում: Նոր է, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	1,258,000	1,258,000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2022 թվականին՝ պայմանագիր կնքելու օրվանից հաշված մինչև դեկտեմբերի 25-ը:
12	33161120/231	Ձեռքի բռնակ թեթևացված	ETHICON ENDO SURGERY, Johnson & Johnson	Հարմոնիկ Գեն11 գեներատորի համար նախատեսված և պարտադիր համատեղելի ձեռքի թեթեւացված բռնակ (օրիգինալ): Բռնակթեթևացված ձեռքի պյեզոէլեկտրական էլեմենտներով: Ն ախատեսված է ուլտրաձայնային վիրաբուժական գեներատորի էլեկտրական իմպուլսները բարձր հաճախականության մեխանիկական տատանումների /55,5 կՀց / վերածման համար: Այդ տատանումները փոխանցվումեն ծայրադիրների սայրին, էլ իրենց հերթին տատանվում են երկայնակի ուղղությամբ: Բաղկացած է բռնակից, որի վրա առկա է ակոսավոր ելուն, որի միջոցով էլ միանում է ծայրադիրներին և ճկուն մեկուսացված լարից, որը վերջանում է ռետինապատ խրոցով, որով միանում է գեներատորի առաջային մակերեսին գտնվող բունոցին: Խրոցի վրա առկա է գունային մակնշում, որը հնարավորություն է տալիս արագ և ճիշտ միացնել բռնակը գեներատորին: Ներկառուցված է հաշվիչ՝ ակտիվացիաների քանակը հաշվելու համար /100 ակտիվացիա/: Հնարավոր է ակտիվացնել ծայրադիրը, հենց ծայրադիրի վրա տեղակայված ձեռքային տրիգերի, ինչպես նաև ոտքի սեղմակի միջոցով: Ունի բռնակի վիճակի թեսթավորման ֆունկցիա: Թերության արտածում գեներատորի դիսպլեյի վրա: Անհատական ձայնային ինդիկացիա բռնակի անսարքության, բռնակի և գեներատորի, բռնակի և ծայրադիրի սխալ միացման դեպքում: Մատակարարվում է կանխարգելիչ	հատ	1,500,000	1,500,000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2022 թվականին՝ պայմանագիր կնքելու օրվանից հաշված մինչև դեկտեմբերի 25-ը:

				պլաստիկ գլխիկով, որը կանխում է ակոսավոր ելունի վնասումը: Մատակարարվում է ոչ ստերիլ: Առկա է մեկ ստուգողական ծայրադիր, որը նախատեսված է բռնակի ադեկվատ աշխատանքի թեսթավորման համար: Տրամադրվում է առնվազն 9 ամսվա երաշխիքային կտրոն: Գործարանային փաթեթավորում: Նոր է, չօգտագործված: Առաջարկի արժեքիմեջ ներառված են՝ կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:							

*Մասնակցի կողմից հայտով միևնույն ապրանքի համար մեկից ավել ապրանքային նշան կամ արտադրող ներկայացնելու դեպքում, պայմանագրի կատարման փուլում, պայմանագրով սահմանված ողջ խմբաքանակի համար ապրանքի միանվագ և (կամ) փուլային մատակարարումն իրականացվելու է պայմանագրով սահմանված ապրանքային նշաններից կամ արտադրողներից միայն մեկով՝ ըստ մատակարարի ընտրության:

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան»
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.12.22 12:40:57 AMT

ՎԱՃԱՌՈՂ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 27/55
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930048363450100
ՀՎՀՀ 02621803
Հեռ. 010 399994, 099 190098
Էլ. փոստ intermedgroup@inbox.ru
Տնօրեն Ա. Դիլանյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by DILANYAN ARMAN 3404850092
Date: 2022.12.21 14:07:30 AMT

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ՀՄԱԱՊՁԲ-2022/9-ԵՊԲՀ-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
8	33161120/227	Ուլտրաձայնային ծայրադիր, ատրճանակատիպ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	395,000	395,000	
9	33161120/228	Ուլտրաձայնային էլեկտրադանակի ծայրադիր, աքսիալ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	382,000	382,000	
10	33161120/229	Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակարգով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	379,000	379,000	
11	33161120/230	Բռնակ ձեռքի ակտիվացման համար	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1,258,000	1,258,000	
12	33161120/231	Ձեռքի բռնակ թեթևացված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1,500,000	1,500,000	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան»
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.12.22 12:41:10 AMT

ՎԱՃԱՌՈՂ
«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 27/55
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930048363450100
ՀՎՀՀ 02621803
Հեռ. 010 399994, 099 190098
Էլ. փոստ intermedgroup@inbox.ru
Տնօրեն Ա. Դիլանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by DILANYAN ARMAN 3404850092
Date: 2022.12.21 14:07:55 AMT

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» « _____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ._____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
Ստորագրություն ստորագրություն